Աննա Բաբուջյան

Խենթ ու խելառ հույզեր

Այսօր հարբել ու սրբել եմ

Փոշին անցած վատ օրերի,

Այսօր մի քիչ ծիծաղել եմ.

Դառն էր արցունքն իմ անցյալի:

Թե' ժպիտ կա , ինչու՞ լացել

Թե' արև կա, ինչու՞ մրսել,

Թե' սերը կա՝ ինչու՞ ատել

Թե որ կյանք կա, ինչու՞ չապրել:

Այսօր մի քիչ դառն էր գինին՝

Վաղը՝գուցե, մեղրից քաղցր,

Այսօր մի քիչ սառն էր քամին՝

Արև կելնի լուսաբացին:

Կյանքի ծառից՝ դառն ու քաղցր,

Թե որ պոկես միայն դառը,

Ծառի պտղից չդժգոհես

Ինքդ ես ընտրել, դառն ուտել:

Այսօր հարբել ու սրբել եմ

Փոշին անցած վատ օրերի,

Այսօրվանից որոշել եմ

Խմել միայն քաղցր գինի ...

4.06.2024

ԱԽՈՒՐՅԱՆ